

Ֆինանսական վիճակի մասին (ձև թիվ 7)
 «30» հունիսի 2024թ
 ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ 0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 10
 (բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	30.06.24	31.12.23 (ստուգված)
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	22,099,974	23,499,645
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	14	6,108	9,262
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	6,068,660	12,266,393
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածքներ	16	184,875,598	171,176,527
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	34,289,840	44,313,510
Անորոշիվացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	17	74,235,912	78,154,643
Հետգծման պայմանագրերով գրավառված ներդրումային արժեթղթեր	18	107,344,182	88,595,879
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	19	1,727,215	872,185
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	1,517,448	2,167,406
Շահութահարկի գծով կանխավճար			45,527
Հետաձգված հարկային ակտիվներ	12	(1,582,625)	1,822,121
Այլ ակտիվներ	22	6,287,521	6,267,006
Ընդամենը՝ ակտիվներ		436,869,833	429,190,102
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	23	103,556,054	91,826,669
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	58,930	29,556
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	24	139,988,139	160,775,017
Բանկի կողմից բողոքակցված արժեթղթեր	25	60,227,786	55,022,320
Այլ փոխառու միջոցներ	26	29,296,850	28,493,452
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		430,045	
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	249,775	
Այլ պարտավորություններ	28	1,833,501	1,826,542
Ստորադաս փոխառություն	29	32,073,913	32,161,126
Ընդամենը՝ պարտավորություններ		367,714,993	370,134,682
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	30	10,000,200	10,000,200
Էմիսիոն եկամուտ		6,205,548	6,205,548
Պահուստներ՝		38,000,725	31,144,339
Գլխավոր պահուստ		40,000,000	40,000,000
Վերագնահատման պահուստներ		(1,999,275)	(8,855,661)
Զբաղիչված շահույթ (վնաս)		14,948,367	11,705,333
Ընդամենը՝ կապիտալ*		69,154,840	59,055,420
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		436,869,833	429,190,102

*Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը 30.06.24թ. դրությամբ կազմում է 97 մլրդ ՀՀ դրամ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

15.07.2024թ.

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)

Գ. Մաչանյան

Գլխավոր հաշվապահ

Ս. Բաղդասարյան



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Գրամական միջոցների հոսքերի վերաբերյալ (ձև թիվ 9)
 «30» հունիսի 2024թ
 ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ, 0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 10
 (բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	30.06.24	30.06.23
1. Գրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Գրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		7,950,113	2,770,008
Ստացված տոկոսներ		20,513,371	17,958,633
Վճարված տոկոսներ		(13,642,029)	(13,981,899)
Ստացված կոմիսիոն գումարներ		553,227	347,908
Վճարված կոմիսիոն գումարներ		(172,009)	(98,002)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		57,084	42,071
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնականություններից օգուտ/(վնաս)		831,099	445,754
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		1,277,244	312,204
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(1,051,222)	(852,406)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(416,652)	(1,404,256)
Գրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		(27,116,099)	8,014,176
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(6,831,567)	(14,409,126)
այդ թվում՝			
վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)		(8,094,363)	(18,804,152)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ նվազում (ավելացում)		2,487,183	(700,574)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)		(1,642,315)	(615,658)
այլ գործառնական ակտիվների նվազում/ (ավելացում)		417,929	5,711,257
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		(20,284,532)	22,423,302
այդ թվում՝			
հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		(22,914,606)	17,544,309
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		2,630,074	4,878,993
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		(19,165,986)	10,784,184
Վճարված շահութահարկ		(650,452)	(779,134)
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		(19,816,438)	10,005,050
2. Գրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(900,308)	(78,430)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		50	3,759
Գրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից			
Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		(900,258)	(74,671)
3. Գրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահութաժիններ			
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		17,961,658	(5,848,518)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(4,590,617)	5,805,729
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		(27,964)	(5,211,628)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		6,673,436	(148,222)
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում			
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)			
Գրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		20,016,513	(5,402,639)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(856,517)	(572,522)
Գրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		(1,556,700)	3,955,217
Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		23,784,598	28,823,459
Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում		22,227,898	32,778,676

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

15.07.2024թ.



Բանկի վարչության նախագահ
 (գործառնական տնօրեն)

Գլխավոր հաշվապահ

Գ. Մաչանյան

Ս. Բաղդասարյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)
 «30» հունիսի 2024թ
 ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ 0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 10
 (բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Բյուջայի արժեքավոր իրերի համատեղակի ֆինանսական արդյունքի մեջ ներառված ֆինանսական արժեքավոր իրերի արժեքի փոփոխություններ	Օ, ընթացիկ ակտիվների վերացում/հատուկ մեկնումներ	Գրառված շահույթ/վնաս	Ընդամենը կապիտալ
Հոդվածներ	1	4	5	7	9	10	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից առօրյական) (I աղյուսակ)							
Մնացորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2023թ.	10,000,200	6,205,548	35,000,000	(18,519,118)	1,134,703	16,283,265	50,104,598
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը							
Վերահաշվարկված մնացորդը	10,000,200	6,205,548	35,000,000	(18,519,118)	1,134,703	16,283,265	50,104,598
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ քաժնետոմսերի (քաժնեմասերի) գծով, այդ թվում՝							
Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ							
Համապարփակ եկամուտ				8,211,230		2,123,000	10,334,230
Շահութաբաժիններ							
Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում),							
Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված							
Ներքին շարժեր, այդ թվում՝			5,000,000			(5,000,000)	
Մասհանումներ գլխավոր պահուստին			5,000,000			(5,000,000)	
Մնացորդ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30 հունիսի 2023թ.	10,000,200	6,205,548	40,000,000	(10,307,888)	1,134,703	13,406,265	60,438,828
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից առօրյական) (II աղյուսակ)							
Մնացորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2024թ.	10,000,200	6,205,548	40,000,000	(10,414,429)	1,558,768	11,705,333	59,055,420
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը					(424,065)	(2,622,068)	
Վերահաշվարկված մնացորդը	10,000,200	6,205,548	40,000,000	(10,414,429)	1,134,703	9,083,265	56,009,287
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ քաժնետոմսերի (քաժնեմասերի) գծով, այդ թվում՝							
Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ							
Համապարփակ եկամուտ				7,280,451		5,865,102	13,145,553
Ներքին շարժեր, այդ թվում՝							
Մասհանումներ գլխավոր պահուստին							
Մնացորդ միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30 հունիսի 2024թ.	10,000,200	6,205,548	40,000,000	(3,133,978)	1,134,703	14,948,367	69,154,840

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 15.07.2024թ.



 Բանկի վարչության նախագահ (տնօրենի տնօրեն) Գ. Մաչանյան
 Գլխավոր հաշվապահ Ս. Բաղդասարյան

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6)
 «30» հունիսի 2024թ
 ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ, 0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 10
 (բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	01.04.24 30.06.24	01.01.24 31.06.24	01.04.23 30.06.23	01.01.23 30.06.23
Տոկոսային և մնանատիպ եկամուտներ	3	10,663,399	21,229,942	9,243,286	18,101,807
Տոկոսային և մնանատիպ ծախսեր	3	(7,083,074)	(14,307,197)	(6,990,981)	(13,909,467)
Զուտ տոկոսային և մնանատիպ եկամուտ		3,580,325	6,922,745	2,252,305	4,192,340
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	308,470	567,905	205,012	366,835
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(68,065)	(157,608)	(49,249)	(84,816)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		240,405	410,297	155,763	282,019
Եկամուտ շահարաժիհներից					
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	502,870	690,187	164,365	388,382
Այլ գործառնական եկամուտներ	6	110,911	261,690	91,832	182,966
Գործառնական եկամուտներ		4,434,511	8,284,919	2,664,265	5,045,707
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(430,961)	312,675	(472,892)	(1,079,549)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(691,051)	(1,293,976)	(643,683)	(1,272,234)
Այլ գործառնական ծախսեր	9	(76,395)	(168,516)	(92,832)	(170,924)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10				
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		3,236,104	7,135,102	1,454,858	2,523,000
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(590,000)	(1,270,000)	(220,000)	(400,000)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		2,646,104	5,865,102	1,234,858	2,123,000
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ					
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նույնացված շահույթ					
Ժամանակաշրջանի զուտ շահույթ		2,646,104	5,865,102	1,234,858	2,123,000
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումներ		(702,950)	8,878,599	8,269,562	10,013,695
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ		126,531	(1,598,148)	(1,488,521)	(1,802,465)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		(576,419)	7,280,451	6,781,041	8,211,230
Համապարփակ ֆինանսական արդյունք		2,069,685	13,145,553	8,015,899	10,334,230

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

15.07.2024թ.

Բանկի վարչության նախագահ
(գործառնող տնօրեն)

Գլխավոր հաշվապահ

Գ. Մաչանյան

Ս. Բաղդասարյան



ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ
 ԱՐՄՍԿԻՍԲԱՆԿ ՓԲԸ, ՀՀ, 0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 10
 01.04.24-30.06.24թթ.

(հազար դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	2	3	4
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	16,205,748	1,000,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	96,669,939	30,000,000	խախտում առկա չէ
Ն ₁ ¹ Առաջին մակարդակի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	15.52%	6.2%	խախտում առկա չէ
Ն ₁ ² Առաջին մակարդակի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	15.52%	8.3%	խախտում առկա չէ
Ն ₁ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	21.89%	11.0%	խախտում առկա չէ
Ն ₂ ¹ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	39.24%	15.0%	խախտում առկա չէ
Ն ₂ ² Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	252.05%	60.0%	խախտում առկա չէ
Ն ₂ ³ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	414.29%	100.0%	խախտում առկա չէ
Ն ₂ ³ (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	310.11%	100.0%	խախտում առկա չէ
Ն ₂ ⁴ Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	132.91%	100.0%	խախտում առկա չէ
Ն ₂ ⁴ (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ	115.13%	100.0%	խախտում առկա չէ
Ն ₃ ¹ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	13.26%	20.0%	խախտում առկա չէ
Ն ₃ ² Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	51.86%	500.0%	խախտում առկա չէ
Ն ₄ ¹ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	4.15%	5.0%	խախտում առկա չէ
Ն ₄ ² Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	16.01%	20.0%	խախտում առկա չէ
Ն ₅ ¹ Պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.37%	10.0%	խախտում առկա չէ
Ն ₅ ² Պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության առավելագույն չափի նորմատիվից շեղումը	0.00%	5.0%	խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը՝		4%, 18%	խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը			
ԱՄՆ դոլարով	0.08%	7.00%	խախտում առկա չէ
Եվրոյով	0.16%	7.00%	խախտում առկա չէ
Ռուսական ռուբլով	0.08%	7.00%	խախտում առկա չէ
Այլ	X	X	խախտում առկա չէ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

15.07.2024թ.

Բանկի վարչության նախագահ (գործադիր տնօրեն) Գ. Մաչանյան

Գլխավոր հաշվապահ Ս. Բաղդասարյան



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 30 2024թ.

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում

1.1 Իրավական դաշտ

1.1.1 Բանկի հիմնական գործունեությունը

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 2004 թվականի հոկտեմբերի 7-ին՝ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրված N84 արտոնագրային համարով: Բանկային գործունեության լիցենզիան տրվել է ՀՀ ԿԲ-ի Խորհրդի 25.02.2005թ. թիվ 74Ա որոշմամբ:

Բանկի հիմնական գործունեությունը կորպորատիվ, ներդրումային և մասնավոր ֆինանսների կառավարմանը բնորոշ ծառայությունների մատուցումն է՝ ֆինանսական գործիքներում ներդրումներ, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդների ներգրավում, ֆինանսավորման (վարկավորում, ֆակտորինգ) և բանկային այլ ծառայությունների մատուցում:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական և փաստացի գործունեության հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 10: Բանկի աշխատակիցների թվաքանակը կազմել է 157, այդ թվում սպասարկող անձնակազմը 11:

1.1.2 Գործարար միջավայրը

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Բանկի ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումներն ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում: Գնանշումները ցածր իրացվելի շուկաներում կարող են չհամընկնել ֆինանսական գործիքների իրական արժեքներին, ինչը հնարավոր կլիներ ակտիվ շուկայի դեպքում, միմյանց հետ գործարքների պատրաստ մեծ թվով վաճառողների և գնորդների պայմաններում:

1.1.3 Բանկը որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

1.2 Կորպորատիվ կառավարում

1.2.1 Խորհրդի կառուցվածքը և կազմը

Բանկի Խորհուրդը (ներառյալ Խորհրդի նախագահը) բաղկացած է հինգ անդամից: Խորհրդի նախագահը հանդիսանում է Վարդան Սիրմաքետը, Խորհրդի մյուս անդամներն են՝ Րաֆֆի Բալոգյան, Արմենակ Դարբինյան, Մերուժան Գալստյան, Արտավազը Սարգսյան:

1.2.2 Տնօրինության կառուցվածքը և կազմը

Բանկի Տնօրինությունը (ներառյալ Տնօրինության նախագահը) բաղկացած է յոթ անդամից: Տնօրինության նախագահը հանդիսանում է Բանկի գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանը, Տնօրինության մյուս անդամներն են Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Մովսիսյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Ներդրումային դեպարտամենտի տնօրեն Արկադի Փինաչյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Վարկավորման դեպարտամենտի տնօրեն Գրիգոր Հովհաննիսյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն Գևորգ Խաչատրյանը, Բանկի գործադիր տնօրենի տեղակալ-Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն Արա Մակարյան, Բանկի գլխավոր հաշվապահ-Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն Սեդրակ Բաղդասարյանը, Բանկի Առևտրի ֆինանսավորման և թղթակցային հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն Անժելա Բարսեղյանը:

1.2.3 Բանկի 16,667 հատ բաժնետոմսերից 14,588 հատ բաժնետոմսերի բաժնետեր է հանդիսանում «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն, իսկ 2,079 հատ բաժնետոմսերի բաժնետեր է հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն:

1.2.4 Բանկի նշանակալից մասնակիցն է «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն, որը տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 87,53 տոկոսին և ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն, որը տիրապետում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 12,47 տոկոսին:

1.2.5 Բանկի Խորհուրդը մեծ ուշադրություն է դարձնում Բանկում կարգապահ և բարձր որակավորում ունեցող միջին և բարձր օղակի ղեկավարների առկայության ապահովմանը: Խորհրդի կողմից պարբերաբար ուսումնասիրվում է ՀՀ-ում

աշխատուժի շուկան և Բանկի ղեկավարների վարձատրության (ներառյալ խրախուսմանն ուղղված վճարների) մակարդակը պահպանում է առավելագույն մրցակցային սահմաններում:

Ծանոթագրություն 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Բանկում ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՖՀՄՍ-ների և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում Բանկը մշակում է դրանք ինքնուրույն, ելնելով՝

- ա. նման հարցերին վերաբերվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից,
- բ. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից,
- գ. գործնական փորձից՝ այնքանով որքանով դա համահունչ է սույն կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված դրույթներին:

Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է՝

- ա. Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով,
- բ. Կրկնակի գրանցման եղանակով՝ ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կրառման հրահանգին համապատասխան,
- գ. Անընդհատ՝ Բանկի պետական գրանցման պահից մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

Բանկի հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս պահպանում է անընդհատության, հաշվետվողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները:

2.2. Համախմբման սկզբունքները

Բանկը որևէ կերպ հաշվետվություններ չի համախմբում, հետևաբար չունի համախմբման սկզբունքներ:

2.3. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես «որպես տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ համապատասխանաբար օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը ճանաչվում է համապատասխան զուտ կամ համախառն հաշվեկշռային արժեքի հիման վրա՝ ՖՄՀՍ 9-ի պահանջների համաձայն:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարման և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը համարվում է վաստակած

Չուտ առևտրային եկամուտ

Չուտ առևտրային եկամուտը ներառում է իրական արժեքով չափվող շահույթով և վնասով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքով հաշվառվող ֆինանսական

ակտիվների վաճառքից առաջացող իրացված եկամուտը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր տեսակի եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից առաջացող զուտ եկամուտը կամ ծախսը:

2.4. Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված իրական արժեքով չափվող շահույթի և վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում:

Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող մնացած բոլոր հետևանքները, որոնց հաշվառումը չի կարգավորված սույն ծանոթագրություններով, կարգավորվում են համապատասխան ՖՄՀՍ-ներով:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	30 հունիսի 2024	30 հունիսի 2023
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	388.16	386.06
ՀՀ դրամ/1 Եվրո	415.72	418.95

2.5. Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների

մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

2.6. Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Բակը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած

ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարները և տոկոսագումարները հավաքագրելու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, իսկ այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարները և տոկոսագումարները հավաքագրելու նպատակով, ինչպես նաև հարկ եղած դեպքում վաճառելու նպատակով, չափվում են իրաան արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, Իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և Իրական արժեքով չափվող շահույթ և վնասով հաշվառվող ակտիվներ: Ֆինանսական ակտիվների նման դասակարգումը կատարվում է՝ հիմք ընդունելով Բանկի բիզնես մոդելը և դրա սահմաններում իրականացվելիք Բանկի հետագա նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել Բանկի բիզնես մոդելի փոփոխություն:

2.7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

2.8. Ռեպո համաձայնագրերով գործառնություններ

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, իսկ այդ պայմանագրերի համաձայն ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածներում:

Հետզնման համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում որպես ակտիվներ, այլ հաշվառվում են Բանկի հետհաշվեկշռում, իսկ այդ արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են որպես պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված ռեպո պայմանագրեր հողվածներում:

2.9. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, սվոպներ և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող շահույթ և վնասով հաշվառվող ֆինանսական գործիքներ, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային գործունեությունից եկամուտ կամ ծախս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

2.10. Վարկեր և փոխառություններ բանկերին, հաճախորդներին

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին և այլ հաճախորդներին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերը և այլ փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական կազմակերպությունների և այլ հաճախորդների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

2.11. Արժեզրկման գծով կորուստների որոշման հիմունքները

Արժեզրկման կորուստների պահուստաֆոնդը ձևավորվում է համաձայն ՖՀՄՍ 9-ը ստանդարտի պահանջների՝ սպասվող կորուստների գնահատման միջոցով: Արժեզրկման կորուստների պահուստաֆոնդը ձևավորվում է “Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքելու համար պահվող ակտիվներ” և “Պայմանագրային դրամական

միջոցների հոսքեր հավաքելու և վաճառելու համար պահվող ակտիվներ“ բիզնես մոդելներին համապատասխանող ֆինանսական ակտիվների համար:

Սպասվող վարկային կորուստները գնահատելիս Բանկը հաշվի է առնում տեղեկատվության առավել լայն շրջանակ՝

- Անցյալում տեղի ունեցած իրադարձություններ, ինչպիսիք են նմանատիպ ֆինանսական գործիքների համար կրած վնասների վերաբերյալ պատմական փորձը;
- ներկա իրավիճակը;
- Արժանահավատ ու հիմնավորվող կանխատեսումներ, որոնք ազդում են ֆինանսական գործիքներից առաջացող ապագա դրամական հոսքերի սպասվող հավաքագրելիության վրա:

Ընդհանուր մոտեցմամբ արժեզրկումից կորստի հաշվարկը կատարվում է եռափուլ գործընթացով, որն արտացոլում է ֆինանսական գործիքի վարկային որակի նվազումը: Առաջին փուլը վերաբերում է գործիքներին, որոնց վարկային որակը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի նվազել կամ որոնք ունեն ցածր վարկային ռիսկ: Երկրորդ փուլը վերաբերում է ֆինանսական գործիքներին, որոնց մոտ սկզբնական ճանաչումից հետո նկատվել է վարկային որակի էական նվազում, սակայն վարկային կորուստ ազդարարող իրադարձության վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ չկան: Երրորդ փուլը վերաբերում է ֆինանսական ակտիվներին, որոնց արժեզրկման վերաբերյալ առկա են օբյեկտիվ վկայություններ:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս կազմակերպությունը համադրում է հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի չհավաքագրման ռիսկի սկզբնական ճանաչման պահի դրությամբ նույն ռիսկի հետ՝ հաշվի առնելով արժանահավատ ու հիմնավորվող տեղեկատվությունը:

Ցածր վարկային ռիսկ պարունակող գործիքների համար Բանկը կիրառում է ՖՀՄՍ 9-ը ստանդարտի առաջարկաց “պարզեցված մոտեցումը”: Ռիսկը համարվում է ցածր, եթե՝

- Գործիքն ունի չհավաքագրման ցածր ռիսկ,
- Փոխառուն ի վիճակի է մարել իր պայմանագրային պարտավորությունները,
- Տնտեսական ու գործարար միջավայրի բացասական փոփոխություններն էականորեն չեն ազդի փոխառուի վճարունակության վրա:

Պարզեցված մոտեցումը չի պահանջում, որպեսզի կազմակերպությունները հետևեն վարկային ռիսկի փոփոխություններին: Այն պահանջում է, որպեսզի կազմակերպությունները ճանաչեն կորստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ելնելով ֆինանսական ակտիվի ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող վարկային կորուստից:

2.12. Տոկոսների հաշվեգրման դադարեցումը

Տոկոսների հաշվեգրումը եկամուտների հաշիվներին դադարեցվում է, եթե ակտիվը սահմանված կարգի համաձայն դուրս է գրվում հաշվեկշռից:

2.13. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հաշվառումը

Ֆիքսված մարման ժամկետով ֆինանսական ակտիվները, որոնք Բանկի բիզնես մոդելի համաձայն պահվում են պայմանագրով նախատեսված մայր գումարներ և տոկոսագումարներ հավաքագրելու նպատակով, հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

2.14. Հեջի հաշվապահական հաշվառումը

Հեջի հաշվապահական հաշվառումը զուգահեռաբար ճանաչում է հաշվանցման ազդեցությունը զուտ շահույթի կամ վնասի վրա, որն առաջանում է հեջինգային գործիքների և հեջավորվող հոդվածների իրական արժեքների փոփոխությունների հետևանքով:

2.15. Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ներդրումների հաշվառումը

Բանկը ասոցիացված և դուստր կազմակերպություններ չունի, հետևաբար այդպիսի հաշվառում չի մշակել:

2.16. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին հետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից: Հետագա ծախսերը, որոնք վերաբերվում են արդեն ճանաչված հիմնական միջոցի միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի

նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Մյուս բոլոր հետագա ծախսերը պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր: Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրումը Բանկն իրականացնում է՝ հանաձայն Բանկի Հաշվապահական հաշվառման քաղաքականության պահանջների:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռք բերման արժեքով: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջինների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի: Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

2.17. Բանկերի և հաճախորդների միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես չափվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

2.18. Ընդհանուր բանկային ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը

Ընդհանուր բանկային դիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշումն ընդունվում է Բանկի Խորհրդի կողմից, որն իրականացվում է Բանկի զուտ շահույթից գլխավոր պահուստին կատարվող մասհանումներով:

2.19. Կապիտալ և էմիսիոն եկամուտ

Կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերվող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Գնված սեփական բաժնետոմսեր

Երբ Բանկը գնում է իր սեփական բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաթողարկումը: Երբ գնված բաժնետոմսերը վաճառվում են երրորդ կողմից կամ վերաթողարկվում են, ստացված գումարները ներառվում են կապիտալում:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչ այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

2.20. Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

Փոխանակման փոխարժեքն ամեն օր հաստատվում է Բանկի գործադիր տնօրենի կողմից, որի առաջարկը ներկայացվում է համապատասխան ստորաբաժանման կողմից՝ ֆինանսական համակարգում տիրող իրավիճակն ուսումնասիրելուց հետո:

2.21. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտները և ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրությամբ հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

2.22. Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում իրականացվում է, եթե տեղի է ունեցել Բանկի բիզնես մոդելի փոփոխություն:

2.23. Տեղեկատվություն սեզմենտների վերաբերյալ

Սեզմենտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտումն իրականացվում է թիվ 14 հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջներին համապատասխան:

Սույն ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին և Բանկի Խորհրդի կողմից հաստատված Հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:



Ծանոթագրություն 3. «Զուտ տոկոսային և մնացորդային եկամուտներ»

<u>Տոկոսային և մնացորդային եկամուտներ</u>	<u>01.04.24 30.06.24</u>	<u>01.01.24 30.06.24</u>	<u>01.04.23 30.06.23</u>	<u>01.01.23 30.06.23</u>
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում ստեղծարարական ավանդներից և վարկերից	121,013	275,471	162,891	233,900
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից	4,793,179	9,304,142	3,415,611	6,555,290
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	3,050,314	6,221,830	3,165,970	6,322,505
Տոկոսային եկամուտներ մինչև մարման ժամկետը պահվող պետական տոկոսային արժեթղթերից	2,111,393	4,258,690	2,218,464	4,458,065
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	76,380	159,593	65,998	137,798
Այլ տոկոսային եկամուտ	511,120	1,010,216	214,352	394,249
ԸՆԴՈՒՄՆԵՐ	10,663,399	21,229,942	9,243,286	18,101,807

